

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԾԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022Ս-15**

ք. Երևան

« 29 » « 12 » 2021 թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Ա. Ազատյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «Թունանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Տիտանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ճանապարհների պահպանման աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին, ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշման համապատասխան, կատարման ժամկետ է սահմանվում՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

- ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,
- բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը,
- գ) **Կատարողը երկու անգամ անընդմեջ թույլ է տալիս ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով նախատեսված խախտումները և դրանք չի վերացնում նույն աղյուսակում նշված ժամկետում:**

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՊՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը՝ **յուրաքանչյուր ամիս՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը**, Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշման 42-րդ կտուով սահմանված փաստաթղթերը, իսկ

էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը 2022 թ համար կազմում է 211,896,920 (երկու հարյուր տասնմեկ միլիոն ութ հարյուր իննսունվեց հազար ինը հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը գործոնային է և կարող է փոփոխվել կախված սպասարկվող ճանապարհների երկարության, ճանապարհների վիճակի, ճանապարհների պահպանման մակարդակի փոփոխության հետ, բացի այդ յուրաքանչյուր տարի կողմերի համաձայնությամբ պայմանագրի արժեքի կարող է վերանայվել կախված նախորդ տարվա պաշտոնապես հրապարակված միջին գնաճից՝ տվյալ տարվա համար նախատեսված հատկացումների շրջանակներում:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով նախատեսված յուրաքանչյուր թերության վերացման համար սահմանված ժամկետի խախտման համար գանձվում է տուգանք նույն հավելվածի 4-րդ աղյուսակով սահմանված չափով և տույժ՝ թերության վերացման համար 3-րդ աղյուսակում սահմանված ժամկետի ուշացված յուրաքանչյուր օրվա համար՝ սպասարկվող ճանապարհահատվածի 1 կմ արժեքի 0.05 տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով, պայմանագրի տեխնիկական առաջադրանքով նախատեսված այլ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման յուրաքանչյուր դեպքի համար գանձվում է տուգանք տվյալ տարվա համար կնքված համաձայնագրի գումարի 0.5 տոկոսի չափով, իսկ ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ տվյալ տարվա համար կնքված համաձայնագրի գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂՁԱԿԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող

կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:²²

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտական կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող մեծածախ կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործունային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկասկածաբանության ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքների առնվազն (70) տոկոսը կատարել անձամբ պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով:

7.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուց հաջորդող օրվանից: Պայմանագիրն

²² Պեղական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | Կատարման | |
|--------------------------------------|---|-----------------------------|---------------------------|---------------------|------------------------|------------------|-------------------|-------------|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | մեկնակցի տեխնիկական բնույթը | Մեկնակցի միջանկյալ գնումը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | Ժամկետը** |
| 15 | 45231176/515 | Ստորև | դրամ | 211,896,920 | 211,896,920 | 1 | Համաձայն դրամագրի | 31.12.2026թ |

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

Ընդհանուր պահանջներ

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքները կատարողն իրականացնում է ապահովելով ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջները, ինչպես նաև սպասարկման աշխատանքների կատարման ոլորտին առնչվող այլ իրավական ակտերի, շինարարական նորմերի, ստանդարտների պահանջները:

Պայմանագրի գործողության ողջ ընթացքում կատարողը պարտավոր է ապահովել ավտոմոբիլային ճանապարհների, **ճանապարհային կահավորանքի** պահպանվածությունն այնպիսի վիճակում, որը համապատասխանում է տարվա ցանկաված ժամանակ տրանսպորտի շուրջօրյա անվտանգ և անխտիվ երթևեկության ապահովման պահանջներին:

Ավտոմոբիլային ճանապարհների, առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների ընթացիկ պահպանման աշխատանքների ընթացքում երթևեկության կազմակերպման անվտանգության բարելավման նպատակով կատարողը պատասխանատուի հանձնարարությամբ, տեղադրում է լուսցուցիչ կահավորանքի միջոցներ:

Ավտոմոբիլային ճանապարհների երթևեկության անվտանգությունն ապահովելու նպատակով կատարողը բնակավայրերից դուրս գտնվող հատվածներում իրականացնում են նաև գլխավոր ճանապարհի հետ հատվող երկրորդական ճանապարհների վրա՝ մինչև 50 մ երկարությամբ հատվածում տեղադրված ճանապարհային նշանների պահպանման աշխատանքները՝ երթևեկության անվտանգության պահանջներին համապատասխան:

Ասֆալտը պարզեցնելու ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ձմեռային (ձմեռվա ժամանակահատված) պահպանման ընթացքում կատարողը պարտավոր է նաև՝

- Ծանապարհների կոնստրուկտիվ տարրերի և երթևեկամասերում թույլ չտալ աղբի, ձյան և սառույցի առկայություն
- Ձյան առատ տեղումների ընթացքում թույլ չտալ 5 սմ-ից ավել շերտի գոյացում: Ուժեղ ձնաքցերի դադարելուց անմիջապես հետո սկսել և ոչ ավելի քան 4 ժամվա ընթացքում ավարտել ճանապարհների մաքրումը
- Մերկասառույցի դեմ պայքարի համար ժամանակին սիրառել աղի և ավազի ցանումը
- Աշխատանքների կատարման ընթացքում ապահովել երթևեկության անվտանգությունը
- Առատ ձյան տեղումների և ուժեղ ձնաքցերի ժամանակ, ճանապարհների մաքրման տեխնիկայի անհնարինության կամ աննպատակահարմարության դեպքում, ճանապարհների փակումն ու բացումը կատարել Պատվիրատուի և ավտոտեսչության տեղական մարմինների համաձայնությամբ
- Ստեղծել շուրջօրյա հերթապահություն, վարել տվյալների գրանցման մատյան և ամեն օր, ժամը 6-8-ը, 12-14-ը և 18-20-ը Պատվիրատուի հերթապահությանը տվյալներ հայտնել, տեղում եղանակի ու ճանապարհների վիճակի մասին: Եղանակային պայմանների կտրուկ փոփոխության դեպքում պարբերաբար տեղեկացնել ճանապարհների վիճակի մասին:
- Սպասարկվող ավտոճանապարհների տարածքում ունենալ առնվազն մեկ ստացիոնար հենակետ՝ ապահովված հոսանքով, կապի միջոցներով բանվորների և մեխանիզատորների համար ցեռուցվող հանգստյան սենյակով:

Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ

ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման կարգի» մեթոդական ցուցումների 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:

Ցեմենտրեպոնն պատվածքով ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ձմեռային (ձմեռվա ժամանակահատված) պահպանման պահանջներն են՝

Ցեմենտրեպոնն պատվածքի հնարավոր քայքայումը կանխելու նպատակով անհարաժեշտ է հնարավորինս նվազագույնի հասցնել աղի քանակը, ինչպես նաև աղի և ցեմենտրեպոնն ծածկի շփման ժամանակահատվածը:

Ձյան շերտը պետք է մաքրել և հեռացնել, երբ ձյան շերտի հաստությունը ավելին է 3-4 սմ-ից:

Ձյունը պետք է մաքրել այնպիսի ձյունամաքրիչով, որը համարված է ռետինե պաշտասանիչ շեղբով:

Աղավազային խառնուրդով մշակելուց հետո պետք է իրականացնել երթևեկելի մասի և կողնակների ճամաքում՝ կանխելով աղային ձյան լճացումը և ապահովելով աղաջրի թայնական ջրահեռացումը:

Մերկասառույցի մշակումը աղավազով պետք է իրականացնել ճանապարհի 1 քմ.-ին աղավազի խառնուրդում մինչև 25 գրամ աղ հաշվարկով: Ճանապարհի ծածկի ձյան շերտը առկայության ժամանակ անհրաժեշտ է օգտագործել աղավազային խառնուրդ, որտեղ աղի պարունակությունը կկազմի մինչև 5%:

Ընթացիկ ամառային («ԳԱՐՈՒՆ-ԱՍՄՈՒ-ԱՇՈՒՆ») ժամանակահատված) պահպանման ընթացքում կապալառուն պարտավոր է նաև՝

• Ճանապարհների պահպանության և երթևեկության անվտանգության պահանջների համաձայն ապահովել սպասարկվող ավտոճանապարհների հետևյալ կոնստրուկտիվ տարրերի պահպանվածությունը՝

- Հողային պատուտ և օտարման շերտ
- Երթևեկելի մաս
- Արհեստական կառույցներ
- Կահավորանք և անվտանգության էլեմենտներ, այդ թվում մետաղական արգելափակոցներ

• Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների կարգի 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ամառային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:

Սպասարկման աշխատանքների ընթացքում՝ գլոբալ տեղորոշման համակարգով (GPS/GLONASS) ստացված տվյալների փոխանցման պահանջները

Կապալառուի սպասարկման աշխատանքներում ընդգրկված՝ ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման կարգի (այսուհետ՝ Կարգ) 53-րդ կետում նշված մեքենա-սարքավորումները պետք է կահավորված լինեն գլոբալ տեղորոշման համակարգով (GPS/GLONASS): Կապալառուն պետք է ապահովվի, որ գլոբալ տեղորոշման համակարգով ստացվող տվյալները ծրագրային մակարդակով պայմանագրի ողջ ընթացքում փոխանցվեն «Երթուղային ցանցի մոդելավորման և ճանապարհային ցանցի ակտիվների կառավարման և սպասարկման աշխատանքների պլանավորման և վերահսկման» համակարգին՝ հետևյալ պահանջներին համապատասխան՝


Հաճախորդի GPS համակարգը պետք է ստանա ճանապարհահատվածները ըստ սպասարկող կազմակերպությունների, ընդ որում ճանապարհահատվածները ստանալու են հետևյալ տրամաբանությամբ՝

Հարցման դեպքում հաճախորդի GPS համակարգին հետ է վերադարձվելու համակարգով սպասարկողին կցված ճանապարհահատվածները, որպես կորդինատների զանգված, իրենց id-ներով: Նաև պետք է հետ վերադարձվեն կցված ճանապարհահատվածի սկզբից նախորդ հատվածը և վերջից հաջորդ հատվածը, նույնպես կորդինատների զանգվածի և id-ների տեսքով: Հարկավոր է ձր-ով սպասարկողներին ուղարկվել ճանապարհահատվածները, որպես կորդինատների զանգված, իրենց id-ներով:

Նկարագրված գործառույթը պետք է իրականացվի ամեն օր job-ով:


Կապի նախարարության համակարգը պետք է հետ վերադարձնի՝

1. Տվյալ պահին ճանապարհի վրա աշխատող մեքենաների գիրքը:



Մեքենաների աշխատելու մասին ինֆորմացիան նախատեսվում է մեխանիկական անջատիչի միջոցով կամ bluetooth սարքի միջոցով:

2. Ճանապարհի մաքրված հատվածները՝ այն հատվածները, որոնց վրա կատարվել է աշխատանք: Մաքրված հատվածների մասին ինֆորմացիան հետ ենք ստանալու ըստ ուղարկված ճանապարհահատվածների id-ների: Եթե տվյալ հատվածի 70 - 80 տոկոսը մաքրածա, համարում ենք , որ հատվածը մաքրած է:
3. Տվյալ պահին մեքենաների գտնվելու վայրը:



- Հետ վերադարձվող տվյալներն են՝
- Մեքենայի id և պետ. համարանիշ
 - GPS server-ի ամսաթիվ / ժամը
 - GPS սարքի ամսաթիվ / ժամը
 - Կորդինատները:

Պայմանագրի գործողության ողջ ընթացքում կապալառուն պետք է ապահովվի Կարգի 53-րդ կետի աղյուսակում նշված ստորև թվարկված մեքենա-սարքավորումների քանակին, տեսակին, կահավորանքին ներկայացվող պահանջները, ինչպես նաև ապահովվի նշված մեքենա-սարքավորումների 70 տոկոսը սեփականության իրավունքով տնօրինելու պահանջը:

Կապալի պայմանագրի գործողության ողջ ընթացքում Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքները իրականացնելու համար անհրաժեշտ մեքենա-սարքավորումներն են՝

| NN | Անվանումը | Պահանջվող քանակը | Սեփականության ձևը |
|----|---|--|---|
| 1 | Գրեյդեր կամ այլ ձյունմաքրիչ մեքենա (ընթացիկ ձմեռային պահպանման ժամանակահատվածի համար), կահավորված ռետինե պաշտպանիչ շերտով ու փոշեցիրով և գլոբալ տեղորոշման համակարգով (GPS/GLONASS): | Որոշվում է պահպանվող ճանապարհահատվածի երկարությունից ելնելով: <u>Նվազագույնը՝</u> ընթացիկ ձմեռային պահպանմանը հանձնվող ճանապարհահատվածի յուրաքանչյուր 40 կմ և յուրաքանչյուր հաջորդ 21-40 կմ համար - 1 միավոր | Սեփական կամ վարձակալած կամ անհատույց օգտագործման հանձնված |
| 2 | Կոմբինացված ճանապարհային մեքենա (ընթացիկ ձմեռային պահպանման ժամանակահատվածի համար), կահավորված ձյունամաքրիչ սարքավորմամբ՝ վերագինված ռետինե պաշտպանիչ շերտով և փոշեցիրով, աղավազային խառնուրդի շաղացիր սարքավորմամբ և գլոբալ տեղորոշման համակարգով (GPS/GLONASS): | Որոշվում է պահպանվող ճանապարհահատվածի երկարությունից ելնելով: <u>Նվազագույնը՝</u> ընթացիկ ձմեռային պահպանմանը հանձնվող ճանապարհահատվածի յուրաքանչյուր 40 կմ և յուրաքանչյուր հաջորդ 21-40 կմ համար - 1 միավոր | Սեփական կամ վարձակալած կամ անհատույց օգտագործման հանձնված |
| 3 | Ինքնաթափ բեռնատար մեքենա, կահավորված գլոբալ տեղորոշման համակարգով (GPS/GLONASS): | Որոշվում է պահպանվող ճանապարհահատվածի երկարությունից ելնելով: <u>Նվազագույնը՝</u> պահպանմանը հանձնվող ճանապարհահատվածի յուրաքանչյուր 30 կմ և յուրաքանչյուր հաջորդ 16-30 կմ համար - 1 միավոր | Սեփական կամ վարձակալած կամ անհատույց օգտագործման հանձնված |
| 4 | Ամբարձիչ | Որոշվում է պահպանվող ճանապարհահատվածի երկարությունից ելնելով: <u>Նվազագույնը՝</u> պահպանմանը հանձնվող ճանապարհահատվածի յուրաքանչյուր 100 կմ և յուրաքանչյուր հաջորդ 51-100 կմ համար - 1 միավոր | Սեփական կամ վարձակալած կամ անհատույց օգտագործման հանձնված |
| 5 | Կոմպրեսոր | Որոշվում է պահպանվող ճանապարհահատվածի երկարությունից ելնելով: <u>Նվազագույնը՝</u> պահպանմանը հանձնվող ճանապարհահատվածի յուրաքանչյուր 50 կմ և յուրաքանչյուր հաջորդ 26-50 կմ համար - 1 միավոր | Սեփական կամ վարձակալած կամ անհատույց օգտագործման հանձնված |
| 6 | Գլդոն (> 5 տ) | Որոշվում է պահպանվող ճանապարհահատվածի երկարությունից ելնելով: <u>Նվազագույնը՝</u> պահպանմանը հանձնվող ճանապարհահատվածի յուրաքանչյուր 50 կմ և յուրաքանչյուր հաջորդ 26-50 կմ համար - 1 միավոր | Սեփական կամ վարձակալած կամ անհատույց օգտագործման հանձնված |
| 7 | Գրեյդեր (ընթացիկ ամառային պահպանման ժամանակահատվածի համար), կահավորված գլոբալ տեղորոշման համակարգով (GPS/GLONASS): | Որոշվում է պահպանվող ճանապարհահատվածի երկարությունից ելնելով: <u>Նվազագույնը՝</u> ընթացիկ ամառային պահպանմանը հանձնվող ճանապարհահատվածի յուրաքանչյուր 60 կմ և յուրաքանչյուր հաջորդ 31-60 կմ համար - 1 միավոր | Սեփական կամ վարձակալած կամ անհատույց օգտագործման հանձնված |

I տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների սպասարկման արժեքի գնագոյացում
(Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ- ԱՇՈՒՆ) (Ձև 8)

| Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր) | Տարվա կտրվածքով (դրամ) | | | |
|------------------------------------|---|---|---|---|
| | Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ կմ-ի պահպանման արժեքը (դրամ) | Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ կմ-ի պահպանման արժեքը (դրամ) | Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ կմ-ի պահպանման արժեքը (դրամ) | Թույլատրելի պահպանման մակարդակի դեպքում՝ կմ-ի պահպանման արժեքը (դրամ) |
| Երաշխիքային ՄԵ | 925348.35 | | | |
| Լավ ՄԼ | 1718547.177 | 1,663,635.73 | | |
| Բավարար ՄԲ | | 2588380.659 | 2,488,815.95 | |
| Վատ ՄՎ | | | | ----- |

II-IV տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների սպասարկման արժեքի գնագոյացում
(Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ- ԱՇՈՒՆ) (Ձև 9)

| Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր) | Տարվա կտրվածքով (դրամ) | | | |
|------------------------------------|---|---|---|---|
| | Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ կմ-ի պահպանման արժեքը (դրամ) | Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ կմ-ի պահպանման արժեքը (դրամ) | Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ կմ-ի պահպանման արժեքը (դրամ) | Թույլատրելի պահպանման մակարդակի դեպքում՝ կմ-ի պահպանման արժեքը (դրամ) |
| Երաշխիքային ՄԵ | 637214.12 | | | |
| Լավ ՄԼ | 1234300.65 | 1179389.21 | | |
| Բավարար ՄԲ | | 1962933.28 | 1933969.00 | |
| Վատ ՄՎ | | | | 1716133.49 |

II-IV տեխնիկական կարգի հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների սպասարկման արժեքի գնագոյացում
(Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ- ԱՇՈՒՆ) (Ձև 9)

| Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր) | Տարվա կտրվածքով (դրամ) | | | |
|------------------------------------|---|---|---|---|
| | Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ կմ-ի պահպանման արժեքը (դրամ) | Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ կմ-ի պահպանման արժեքը (դրամ) | Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ կմ-ի պահպանման արժեքը (դրամ) | Թույլատրելի պահպանման մակարդակի դեպքում՝ կմ-ի պահպանման արժեքը (դրամ) |
| Երաշխիքային ՀԵ | 563294.37 | | | |

| | | | | |
|---------------|------------|------------|------------|------------|
| Լավ ՀԼ | 1076203.96 | 999569.31 | | |
| Բավարար ՀԲ | | 1755054.24 | 1692901.72 | |
| Վատ ՀՎ | | | | 1560148.78 |

Ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման արժեքի գնագոյացում(Ձև 10)

| Ավտոճանապարհների կարգերը | Տարվա կտրվածքով (դրամ) | | |
|--|--|--|---|
| | Լավ սպասարկման մակարդակի դեպքում 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ) | Միջին սպասարկման մակարդակի դեպքում 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ) | Բավարար սպասարկման մակարդակի դեպքում 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ) |
| I տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհներ | 486358.51 | 470066.10 | 444118.93 |
| II-IV տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհներ | 346364 49 | 329770.38 | 320719.04 |
| II-IV տեխնիկական կարգի հանրապետական նշանակության ավտոճանապարհներ | 375932.20 | 172578.82 | 164130.91 |

| Մետաղական արգելափակոցների պահպանման արժեքի գնագոյացում | |
|--|--|
| Տարածաշրջանի անվանումը | 1000 գմ մետաղական արգելափակոցների պահպանման արժեքը |
| Թումանյանի տարածաշրջան | 1365243 32 |

Թումանյանի տարածաշրջան Ձև N 11

2022 թ.-ի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը սպասարկման ենթակա ավտոնմուտայարկեր

| Ավտոնմուտայարկի անվանումը և պիկետաժը | Ավտոնմուտայարկի տեսնիկական կարգը | Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/ | Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը | Սպասարկման պահանջվող մակարդակ | Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/ | Միավորի գինը / դրամ/ | Ընդամենը / դրամ/ |
|--|----------------------------------|--|---------------------------------|-------------------------------|---------------------------------------|----------------------|-------------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ | | | | | | | |
| Մ6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման կմ 33,8-կմ 76,9 | Միջպետական II-IV | 43.10 | | Լավ | 43.10 | 346364.49 | 14928309.71 |
| Հ-22, Մ6-Դսեղ-Հ-70 կմ0-կմ13,9 | Հանրապետական II-IV | 13.90 | | Միջին | 13.90 | 172578.82 | 2398845.663 |
| Հ25, Մ6-Հաղպատի պատմական հուշարձան կմ0-կմ5,0 | Հանրապետական II-IV | 5.00 | | Լավ | 5.00 | 375932.20 | 1879660.975 |
| Հ35, Մ6-Օձուն-Արևածագ-Հ24 կմ 0- կմ22,4 | Հանրապետական II-IV | 14.80 | | Միջին | 14.80 | 172578.82 | 2554166.606 |
| Հ58, Ալավերդի-Ջիլիգավրաստանի սահման կմ0-կմ32,5 | Հանրապետական II-IV | 28.00 | | Միջին | 28.00 | 172578.82 | 4832207.092 |
| Հ33, Մ3-Ստեփանավան-Ագարակ-Ցաղրան-Հ35 կմ18.4-կմ24,2 | Հանրապետական II-IV | 5.80 | | Միջին | 5.80 | 172578.82 | 1000957.183 |
| Հ70, Մ6-Աթան կմ0-կմ 27,5 | Հանրապետական II-IV | 27.50 | | Միջին | 27.50 | 172578.82 | 4745917.679 |
| Ընդամենը | | 150.20 | | | 138.1 | | 32340064.9 |
| Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ | | | | | | | |
| Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման կմ 33,8-կմ 76,9 | Միջպետական II-IV | 38.45 | Երաշխ. ՄԵ (0) | Լավ | 38.45 | 637214.12 | 24500882.99 |
| Հ-22, Մ6-Դսեղ-Հ-70 կմ0-կմ13,9 | Հանրապետական II-IV | 4.65 | Լավ. ՄԼ (I) | Լավ | 4.65 | 1234300.65 | 5739498.023 |
| Հ25, Մ6-Հաղպատի պատմական հուշարձան կմ0-կմ5,0 | Հանրապետական II-IV | 5.00 | Երաշխ. ՀԲ (II) | Լավ | 5.00 | 1755054.24 | 14040433.89 |
| Հ25, Մ6-Հաղպատի պատմական հուշարձան կմ0-կմ5,0 | Հանրապետական II-IV | 5.00 | Երաշխ. ՀԵ (0) | Լավ | 5.00 | 563294.87 | 2816474.351 |

| | | | | | | | |
|---|--------------------|--------|----------------|-------|--------|------------|--------------------|
| Հ33, Ս3-Ստեղծարարական-Ազարակ-Յարդան-Հ35 կմ18.4-կմ24.2 | Հանրապետական II-IV | 5.30 | Լալվ Հ(1) | Լալվ | 5.30 | 1076203.96 | 5703881.012 |
| Հ35, Ս6- Օձուն-Արևածագ-Հ24 կմ 0- կմ22,4 | Հանրապետական II-IV | 14.80 | Լալվ Հ(1) | Լալվ | 14.80 | 1076203.96 | 15927818.68 |
| Հ58, Ալավերդի-Ջիլիղգա կմ0-կմ32,5 | Հանրապետական II-IV | 28.00 | Բակարար ՀԲ(II) | Միջին | 28.00 | 1755054.24 | 49141518.62 |
| Հ70, Ս6-Աթան կմ0-կմ 27,5 | Հանրապետական II-IV | 27.50 | Երշախ. ՀԵ (0) | Լալվ | 27.50 | 563294.87 | 15490608.93 |
| Ընդամենը | | 150.20 | | | 131.70 | | 133361116.5 |

Մենտալական արժեքավակիցների պահպանում

| Տարածաշրջանի անվանումը | Ընդհանուր ներկայությունը | / 1000 գմ/ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդամենը /ՀՀ դրամ/ |
|------------------------|--------------------------|------------|------------------------|--------------------|
| Թումանյանի տարածաշրջան | 33.837 | | | |
| | | | 1365243.32 | 46195738.38 |

Նշված են մետաղական արժեքավակիցների պահպանում
 Կնիդքը Թումանյանի տարածաշրջանով/ձևեր, ամսոր և մետաղական արժեքավակից/ 211896920

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

ՀՀ տարածքային կառավարման և նշագրաբանության նախարարություն
 ՀՀ Բ.Երևան, Կառավարական տուն 3,
 ՀՀ կենտրոնական գանձապետարան
 ՀՀ ՀՀ 02815457
 ՀՀ 900011012136

գլխավոր քարտուրսների փոխարինող
 Ս. Մարտիրոսյան



Կ Ա Տ Ա Լ Դ Ղ

«ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՃՇՇՁ» ԲԲԸ
 ՀՀ, Լոռու մարզ ք. Ալավերդի, Հաղպատ
 կ/կայան
 «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ Ալավերդի մ/ճ
 ՀՀ ՀՀ 06600269
 ՀՀ 220323333710000

տնօրեն
 Մ. Տիտանյան



:Աղյուսակում տրամադրված մեղքերից զրկվելու, ճանաչվելու և քննարկվելու արդյունքում կրեմլի արտադրության գործարար *



ԿԱՄԱՐԱԿՐԱԿՈՒՄ
ՏԻ

Պատվաստված է ինքնուրույն կատարելու և պատասխանատվություն կրելու համար

[Handwritten signature]

Ս. Ս. Ս. Ս.

Ստորագրողի անունը և մասնագիտությունը

06600269

Ստորագրողի անունը և մասնագիտությունը

247790301144

Ստորագրողի անունը և մասնագիտությունը

«Արտադրության գործարար»

Ստորագրողի անունը և մասնագիտությունը

ՀՀ, Լոռու մարզ, Բ. Արտադրության գործարար

Ստորագրողի անունը և մասնագիտությունը

«Բ. Արտադրության գործարար»

3. Ընկերության անունը և հասցեն

Ստորագրողի անունը և մասնագիտությունը

Ստորագրողի անունը և մասնագիտությունը



| | | |
|--|-----------------------------------|----------------------------------|
| 1. | ԿԻՆՈՒՄԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ | |
| 2. Րիկ | | |
| 3. | Ներկայացված ամսաթիվը՝ " 20 թ. | |
| 4. Կցարկի անվանումը, կամ անուն ազգանունը (ընկերություն)՝ «ՃԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ» | | |
| 5. Կցարկի նպատակը՝ Ֆինանսական կանցակետի համարը (քանի)՝ «ԱԿԻՄ ԲԵՐԸ ԱՍԿԱԿՆԵՐԻ Վ/Բ» | | |
| 6. Կցարկի հաշվի համարը՝ 220323333710000 | | |
| 7. Կցարկի ՀԿՀՀ՝ 06600269 | | |
| 8. Կցարկի ՀԾՀ՝ | | |
| 9. Շահարկի անվանումը, կամ անուն ազգանունը՝ «Ճանապարհային ղեկավարում» | | |
| 10. Շահարկի ՀԾՀ (չի լրացվում) | | |
| 11. Շահարկի ՀԿՀՀ՝ 02702598 | | |
| 12. Շահարկի նպատակը՝ սպասարկող ֆինանսական կանցակետի համարը (քանի)՝ ՀՀ ՖՆ կենտրոնական գանձարկային պալատ | | |
| 13. Շահարկի հաշվի համարը (հշ.Ն)՝ 900005000758 | | |
| 14. Գումարը (թվերով և քանակով)՝ 63,569,076 (կարգաթիվը՝ 63,569,076) հարյուր միլիոն հինգ հարյուր կարգաթիվը (թվերով) | | |
| 15. Ակցիայի անվանումը՝ (թվերով և քանակով) (ախտարկագրի և նշված գումարի մասնակի կանցակետի համար, որը չի կիրառվում) | | |
| 16. Արժեքը (քանակով և կտրիկ)՝ ՀՀ դրամ | | |
| 17. Գործարքի (կցարկի) նպատակը՝ (կարգաթիվը և քանակը) | | |
| 18. Կցարկի նպատակը՝ (Փաստաթուղթի անվանումը, ֆինանսական համարը, ֆինանսական համարը, ֆինանսական համարը, ֆինանսական համարը, ֆինանսական համարը) | | |
| 19. Կցարկի նպատակը՝ «ակցիայի անվանումը» | | |
| 20. Առիթի էջերի քանակը՝ --- էջ | | |
| 21. ա. Կցարկի ստորագրությունները՝ | 21. բ. Կ.Տ. | 22. բ. Կցարկի ստորագրությունները |

«Վանկի դորճում» ընկերության կողմից կատարվող աշխատանքների արդյունքների մասին հաշվետվություն

Այս հաշվետվությունը կատարվել է համաձայն «Վանկի դորճում» ընկերության կողմից կատարվող աշխատանքների արդյունքների մասին հաշվետվություն



Ս. Գրիգորյան
06600269

Ստորագրողի անունը

247790301144

Ստորագրողի պաշտոնը

«Վանկի դորճում» ընկերության տնօրեն

Ստորագրողի հասցեն

ՀՀ, Լոռու մարզ, Բ. Ալյակերտի, Հարցաթղթի, համայնքի կենտրոն

Ստորագրողի հեռախոսահամարը

«Վանկի դորճում» ընկերության հեռախոսահամարը

3. Ընկերության կողմից կատարվող աշխատանքների արդյունքները

Համաձայն «Վանկի դորճում» ընկերության կողմից կատարվող աշխատանքների արդյունքների մասին հաշվետվությունը կատարվել է համաձայն «Վանկի դորճում» ընկերության կողմից կատարվող աշխատանքների արդյունքների մասին հաշվետվություն

Այս հաշվետվությունը կատարվել է համաձայն «Վանկի դորճում» ընկերության կողմից կատարվող աշխատանքների արդյունքների մասին հաշվետվություն

2. Այլ տեղեկություններ

| | | |
|---|--|--|
| <p>24. Գ. Շահատին սպասարհող ֆինանսական կազմակերպություն</p> | <p>24. Գ. Շահատին սպասարհող ֆինանսական կազմակերպություն /</p> <p>Կ.Տ. /ստորագրություն/</p> <p>23. Գ. " " 20 Գ.</p> | <p>23. Գ. Կատարման անաբիլ՝ /</p> <p>23. Գ. Կատարման անաբիլ՝ /</p> <p>Կ.Տ. /ստորագրություն/</p> <p>23. Գ. " " 20 Գ.</p> |
|---|--|--|